ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՇՏ

ՀՈՂԸ ՊԱՇՏՊԱՆԻՈՒՄ Է ԱՐԵԱՆ ԳՆՈՎ

Մայիսի 4ին սգի մէջ էր Հայաստան աշխարհը։ Սգի մէջ էր ամբողջ հայութիւնը՝ Գետաշէնից մինչեւ Ամերիկա, Ստեփանակերտից մինչեւ Աւստրալիա, մինչեւ Փարիզ, Բեյրութ, Աթէնք, մինչեւ այնտեղ, ուր գեթ մէկ հայ կայ։ Սգի մէջ են Հայ Յեղափոխական Դաշնակցութեան բովանդակ շարքերը աշխարհի ամբողջ տարածքին։ Սուգ եւ

Շար. էջ 2 →

ՀՈՂԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է...

սկիզբը էջ 1

ոգեկոչում: Թաթուլ Կրպէյան, Սիմոն Աչիկգոզեան, Արթուր Կարապետեան, Վալերի Նազարէթեան, Զարզանդ (Հրաչ) Դանիէլեան: Դիւցազուններ, որոնք զոհուեցին խորհրդային բիրտ ուժերի եւ ազերի հրոսակախմբերի դէմ յանուն Գետաշէնի եւ Մարտունաշէնի մղած անհաւասար մարտերում: Ընկան վասն հայրենեաց, վասն Մայր Արցախից պոկուած մի կտոր Արցախի, յանուն Արցախի ազատագրութեան: Ընկան, որպէսզի իրենց մահով վերարժեւորեն մեր մտքերի մէջ Հայրենիքի գաղափարը, որպէսզի իրենց արեամբ գծուած սահմանները պատգամեն սերունդներին:

Ժամը 12ին Երեւանի Ազատութեան հրապարակում ծովածաւալ բազմութիւնը հաւաքուել էր հրաժեշտ տալու հինգ նուիրեալ մարտիկներին: Բազում ժողովուրդ, բոլորը մի ոգի, մի մարմին: Արցունքոտ աչքերում վրէժի կայծեր են բոցկլտում, հոգիների մէջ ընդվզումի ալիքն է ահագնանում: Սկաուտները իրենց դրօշակներով պատուոյ պահակ են կանգնել դագաղների շուրջ: Փողփողում են սեւ հագած եռագոյնները: Բռունցքների անտառի միջով տանում են անիւնները Դաշնակցութեան դրօշներով ծածկուած:

Սգոյ հանդիսութիւնը բացեց Երեւանի քաղաքային խորհրդի նախագահ Համբարձում Գալստեանը:

Այնուհետեւ խօսք առաւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Հայաստանի Կենտրոնական Կոմիտէի քաղաքական դիւանի ներկայացուցիչ Հրայր Կարապետեանը. «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան նուիրեալ նահատակների կողքին այսօր աւելացան նորերը: Երեւի թէ այս զոհաբերութիւնն էր պէտք ցոյց տալու համար, որ ազգային-ազատագրական պայքարի ոգին անննկուն է, ցոյց տալու, որ միասնութիւնը լինում է ոչ թէ հրապարակներում, այլ մարտի դաշտում, ապացուցելու համար, որ միայն արեան գնով է հողը պաշտպանւում: Եկաւ Թաթուլը Գետաշէն եւ հետը մի արկղ գիրք բերեց. գիշերները Ռուբէն էր կարդում, ցերեկը դաս էր տալիս դպրոցում, կեսօրին մարտնչում էր գիւղի համար: Սա է գաղափարական մարտիկի կերպարը, եւ այդ կերպարները՝ Թաթուլի, Արթուրի, Սիմոնի, Վալերիի, Հրաչի՝ մեզ պիտի ոգեւորեն, մեզ պիտի կանչեն մարտի: Յարատեւ կռուի զաւակներն են նրանք: Միայն այս ձեւով է Հայրենիքը պաշտպանւում:

Մի քանի օր առաջ այստեղ, այս հրապարակում այս տղաների հրամանատարին սուլում էին: Այդ ընդվզողները թող հիմա հողը պաշտպանելով թուրքի դէմ ընդվզեն, ոչ թէ հրապարակներում»:

Այնուհետեւ հոգեւորականները կատարեցին թաղման արարողութիւնը: Ապա ըստ աւանդոյթի հնչեց «Վերքերով լի» երգը, երգ, որով թաղւում են դաշնակցական մարտիկները, պատգամելով «Շարունակէք մեր սուրբ գործը, Դաշնակցութեան վեհ քաջեր»:

Արթուր Կարապետեանի եւ Վալերի Նազարէթեանի մարմինները ամփոփուեցին Եռաբլուրում, ուր վերջին տարիներին զոհուածներն են թաղուած: Ջէյրունի գերեզմանատունը Սիմոն Աչիկգոզեանի անիւնը եւ համապատասխան արարողութիւնից յետոյ հողին յանձնուեց:

Սգոյ մի մեծ թափօր ուղղուեց դէպի Թալին, դէպի Թաթուլի հայրենի գիւղը՝ Արեգ:

Այսօր Դաշնակցութեան դրօշը խոնարհուեց իր զաւակների թարմ շիրիմներին:

Խոնարհում եւ Փառք...

ՆԱԻՐԻ ՅՈՒՆԱՆԵԱՆ